

տամուռնքն ալ — իր անհատականութեան պաշտամունքը: Պէտք է անպատճառ շփոթել զայն եսի կողմից ու գոհճիկ հաւատամքին հետ: Անհատը՝ իր լիակատար անկախութեամբ, իր անկապտելի իրաւունքներով սրբազան բան մըն էր դեռ երիտասարդ Կլէմանտոյի աշխարհայեցութեան մէջ: Եւ այդ անկախութիւնը, այդ իրաւունքները կատարողը, բուն նախանձախընդրութեամբ պաշտպանեց նա՝ Հայրենիքի անկախութեան ու իրաւունքներուն հետ՝ իր բովանդակ կեանքի ընթացքին, մինչեւ վերջին շունչ: Անկարելի է չսոնարհիլ անհատապաշտութեան այդ ջինջ եւ մոլեռանդ հաւատամքին առջեւ. անոր տրամաբանական հետեւանքն է արդէն ազատութեան պաշտամունքը:

Անհատը՝ ազատ իր զարգացման ու յառաջադիմութեան մէջ, ազատ, ինքնիշխան իր ճակատագիրը տնօրինելու մէջ. — Հեռացուցէ՛ք, ուրմեն բոլոր դողմերը, կրօնական բոլոր հանգանակները, քաղաքական եւ ընկերային բոլոր կապանքները, որոնք կը ճնշեն մարդ-քաղաքացիի միտքն ու հոգին:

Եւ 25 տարեկան նետուեցաւ կրկէսին մէջ, ամուր գրկած երկու իտէալ. կրօնի հանդէպ՝ խղիւսի ազատութիւն, քաղաքական բռնաւոր կարգերու հանդէպ՝ Հանրապետութիւն, ժողովուրդի գերիշխանութիւն: Վաթսուռական թուականներն էին, Նապոլէոն Գ.ի կայսրութեան օրերը: Կլէմանտո զաւազիրներու շարքին մէջ է եւ քանի մը անգամ բանտ կը նստի: Իր անմիջական ուսուցիչն է Բլանկի, հռչակաւոր յեղափոխականը, որ կեանքի կէսը — ամբողջ 35 տարի — անցուցեր է բանտերու մէջ:

1870 թուականէն կը սկսի Կլէմանտոյի եռուն գործունէութեան շրջանը: Հայրենիքը, գերմաններէն ոտնակոխ, ծանր տագնապի մէջ: Ֆրանսան կ'անդամահատուէր, կուտար թշնամուն Ալլաա-Լօրրէնը: Ներքը՝ ապստամբ Կոմմունան, քաղաքացիական պատերազմը, սովի արհաւիրքները: Երիտասարդ գործիչին սիրտը կ'արիւնուի... Աւելի ուժգին կ'արծարծուի անոր մէջ հայրենասիրութեան բոցը, կ'ուխտէ թերեւս վրէժխնդիր լինել գերմաններէն... Ճակատագրի խաղը... Յիսուն տարի յետոյ, արդարեւ, Ֆրանսան պիտի լուծէ գերազոյն վրէժը, գլուխ ունենալով Կլէմանտոն:

Թողեց բժշկութեան իր արհեստը եւ ոտքով գլխով նետուեցաւ քաղաքական խառնարանին մէջ: Կռիւր, գաղափարային պատերազմը իր տարերքն էր: Մօնմարտի քաղաքագլուխն է, պարիզեան Քաղաքապետութեան նախագահ է, ապա երեսփոխան է ազգային Սորհրդարանին մէջ, Հանրապետական Պարլամենտին մէջ: Պատերազմը իր ահաւոր չարիքներուն հետ բարիք մըն էր բերեր: Ֆրանսան թօթափեր էր կայսերական ազդեցութիւնը ոչխիմը եւ հռչակեր էր Հանրապետութիւն — երրորդը Մեծ Յեղափոխութենէն ի վեր:

Ինչ գեղեցիկ ասպարէզ երիտասարդ ռազմիկին համար, ո՛րքան բուն ու տպաւորիչ գաղափարամարտ... Կլէմանտո առաջին շարքերուն մէջ է, կը մօտենայ Գամբետտային, որ իր տիրական հմայքով կ'առաջնորդէր հանրապետական կուսակցութիւնը. սակայն, երկու պարագլուխներու մտերմութիւնը երկար չի տևեր. Կլէմանտո-Վազըր շուտով կը ցուցնէ իր ժանիքները Գամբետտային, որ անոր աչքին չափաւոր մըն էր, պատեհապաշտ մը: Ինքը աւելի արմատական է, աւելի ըմբոստ հանդէպ արքայական տակաւին հօր աջակողմին. ինքը աւելի ձախակողմեան է, ոտքով մը գրեթէ ընկերվարութեան մէջ. ինքը ջերմ, համոզուած պաշտպան է ժողովուրդի խոնարհ, աշխատաւոր զանգուածներու: Վարպետ ճառով մը տըրամադրութիւն կը յառաջացնէ Սորհրդարանին մէջ եւ կը տապալէ Գամբետտայի դահլիճը: Ատրիկա «Վազրի» առաջին մեծ յաղթանակն էր. մին միւսի ետեւէ պիտի տապալէ ժիւլ Գրէվի, Գամբետտայի, Ֆրէյսինէի, Ռուլլիէի եւ ուրիշ շարք մը վարչապետներու դահլիճները եւ պիտի հռչակուի Ֆրնասայի եւ աշխարհի մէջ, որպէս նախարարութիւններու անխոնջ ու անզուլ տապալող (Le Tombeur des Ministeres):

Հէնց որ կը նշմարէր յետադիմական ունէ ձգտում այս կամ այն վարչապետի մօտ, ունէ փորձ տահմանափակելու, սեղմելու ժողովրդական իրաւունքները, խօսքի, մամուլի ազատութիւնը, իսկոյն կը զարկէր ահակոչնակը, կը համախմբէր Հանրապետութեան ուխտեալները, խնդիր կը հանէր պարլամենտին մէջ եւ խարանոց ճառով մը կը տապալէր դահլիճը: